

Գրական Էջ

«ԼՈՒՍԱԻՈՐ ԱԶՔԵՐՈՎ» ՀԱՐԱԶԱՏ ՄԵ...

Ուղիղ երեսուն տարի առաջ մարդուն դարաւոր կիրքերը, ցանկութիւնները, երազները, յուսարեկումները, պոռթկումներն ու պարտութիւնները արդիաշունչ «Անկարելի կարելին» անուն բատերախաղով մարմնաւորել է ետք, Մովսէս Պէշաքեանը բացուեցաւ արձակի գրեթէ բոլոր սեռերուն՝ ստորագրելով պատմուածք, վէպ, գրանկար, տպաւորապաշտ էջ, ակնարկ, գրոյց... Նախավերջինը այս սեռերուն խոստովանութեան պարզ լեզուով եւ հեզասահ ոճով բնորոշուող արձակ բանաստեղծութիւնը եղաւ, որուն անմիջական ոճին ստեղծած քաղցր յամեցումը դեռ չպահած՝ տարի մը ետք հայ գրաստիւնը հրաժարուց իր մերձ-գրական նորագոյն գրութիւնները ամփոփող «Աշխարհահայեաց պատուհան» խորագրեալ իններորդ հատորը, որ ձեռնով մը եղաւ բնական շարունակութիւնը նոյն բնոյթի «Լուսաւոր» փոռած տանիքի վրայ» եւ «Անկատար վերծանումներ» շարքերուն:

Երեսուն տարի: Եւ տեսլական ու գրական ծրագիր ունեցող արուեստագետի մը լրջութեան ամենէն պերճախօս սպասողները հանդիսացող մէկը միւսէն աւելի ինքնուրոյն, ուշագրաւ, ինքնագործ եւ շահեկան ստեղծումներ, որոնք, հեղինակին իսկ պատկերաւոր արտայայտութեամբ, երբ չգրուէին՝ աշխարհի պիտի չբանալուէր անշուշտ, պիտի խանգարուէր սակայն իր մը: «Համաստեղութիւն մը: Ձէ՛ որ սրահի մը հարիւրաւոր լոյսերէն մէկը եթէ չվատի, ոչինչ կը փոխուի սրահին լուսաւորութեան, սակայն կը բացուի խոց մը այդ լուսաւորութեան ներդաշնակութեան մէջ»:

Մովսէս Պէշաքեան խորապէս իրաւունք ունի, որովհետեւ գերզգայուն հայու եւ մարդու խմորէ շարունակ այս գրողը եղաւ ոչ միայն իր տարբեր երանգով ու բոլորով լուսաւորեալ տաճար մը, այլ լեւ սփիւրբահայ արձակի վերջին երեսուն տարիներու ամենէն ուշագրաւ ներկայացուցիչներէն մէկը, չըսելու համար՝ միշտ ինքզինք գերազանցող մէկ բացառիկ երեսույթը:

Մարդուն ներքին աշխարհի ոլորտներէն ներս բաժանցելու, կեանքի առօրեայ հեւքին ու յորձանքին անհերք իրողութիւնը բացայայտելու, նոյնիսկ շրջապատի ոչ-վիպական իրականութեան արդի, հակասական, խաչաձեւուած, անհանդարտ վիպական աշխարհ մը եւ տիպարներ ստեղծելու այս երեսունամեայ ճիգին ու տաղանդին նորագոյն դրսեւորումն է 63 արձակ բանաստեղծութիւններ ամփոփող «Մինչեւ վերջինը արեւներուն» հատորը, որուն 228 էջերէ բաղկացած «Աշխարհահայեաց պատուհան» խորագրեալ վերջին գիրքին շուրջ քսան արձակ գրութիւնները, այն առեւն աւելի բացայայտ կը դառնայ, թէ ո՞րքան ինքնադրոշմ, բազմաշերտ, բարախուն եւ առիւնը կ'Մովսէս Պէշաքեան անուն այս գրական բաց ծրագիրը:

Ապրուած կեանք մը՝ բառին ամբողջական առումով, բայց միաժամանակ՝ նաեւ չպարուած, մարմին չստացած երազներու նոյնքան ծանրակշիռ ամբողջութիւն մը՝ բառին է՛ն վաւերական իմաստով: Եւ գրող մը, աւելի ճիշդ՝ մանուկի անաղարտ հոգին ու աչքերը մարքամաքուր պահած արեւելքի երգիչ մը, որ յաւերժական դժգոհ արեւսագետի իր խոնարհութիւնն ու կոչումին հաւատարմութիւնը սփիւրբահայու եւ մարդու տուայտանքներն ու երազները կ'երգէ անմիջական, գուարթախոն, պատկերաւոր, խոհարարի եւ հաղորդական արձակի շերտ ոճով մը, որ պարզունակ բուացող վիճակները կը բարձրացնէ իմաստասիրական լուրջ ոլորտներ, մակերեսային իրականութիւններէն կ'արտել յաւերժական ճշմարտութիւններ, արցունքը կը վերածէ ծիծաղի չափ սրտագրաւ խօսք ու խոհի, որպէսզի անսկիզբ ու անվերջ այս տիեզերքի սրտին վրայ կանգնելով՝ շարունակէ աղաղակել հպարտաձայն.

«- Ե՛ս ալ մարդ եմ»...

Ս. ԿՈՒՎԱՅԱՆ

ԿՈՅՐ ԿՆՈՋ ՆԱՅՈՒԱԾՔԸ

Գնացք մտած իսկ րոպէին, նշելով անունը իջնելիք կայանին, կին մը զգուշացնել կը խնդրէր, Պասթիւնի կայանին մասին էր, ակնթարթ մը չէի ըմբռնէր, բայց շուտով կը յայտնուէր թէ կու գար Արձանթիւնէն եւ զրկուած էր տեսողութենէն:

Կոյր էր ան, բայց անոր աչքերը ունէին նայուածք բնական, կը դառնային անոնք իրենց խոտոշիւ մէջ, կանաչ էին այդ աչքերը գէշ, հմայիչ էին անոնք, անշամանդ, գրաւիչ, բայց, բայց կը տեսնէի ոչինչ: Կը հասնէր գնացքը Պասթիւն, կը զգուշացնէի, կը կանգնէր կինը անսիրապէս ոտքի, կը հակէր ան դէպի իմ կողմը ու շնորհակալութիւն յայտնելու ակնթարթին, իր կոյր աչքերով վրաս այնպիսի նայուածք մը կ'արձակէր որ կը սարսափէ:

Ո՛չ հայր, ո՛չ մայր, ո՛չ քոյր, հօգոր էր այնքան նայուածքն այդ կնոջ կոյր:

Բայց, աչքերով առիւնը, ներքին կրակով մը ճարճատող, կիրք շարժումներու տեր, երկար մագերով շէնջող կինն այդ իրա՞ւ կոյր էր:

Կը շարունակէր իր ընթացքը մեթորն, ես՝ արդէն կատ տը Լիոն, իջած էր ան, խառնուած բազմութեան, կը գզայի ինքզինքս մերկ, խոցելի, կը գզայի ինքզինքս ծիծաղելի, շարունակ հարց կու տայի՝ կոյրը ե՞ս էի:

Կը զգամ ինքզինքս անպաշտպան, արարած մը յանձնապատասխան, այդ աչքերը վրաս վերակացու, այդ աչքերուն ես հաշուետու, շարունակ հսկուած, անգամ՝ շղթայուած, կորսնցուցած ամէն ապաւէն, անկարող մտածելու ազատութեան, ենթակայ մնալուն հարցաքննութեան, միշտ նոյն հարցումը՝ ո՞վ է կոյրը, ե՞ս թէ ան. կ'որոնէս պատասխան, կը վախճամ այնքան որ՝ որպէս ակամատես վկայ՝ ո՞վ կանչուի միայն իմ վերջին դատավարութեան, բայց ո՞վ է ան, ո՞վ դրկած էր զայն, պիտի ըլլան մ'հարցումիս հատուտ պատասխան, պիտի ըլլան իմ պատասխան եթէ ենթադրեմ որ ե՛ս եմ ան, կոյրը որ կը տեսնէր ամէն բան, թէ՛ պիտի ըլլայ պատասխան մը պատահական, պատասխան՝ հոգեբուժական:

Առայժմ՝ ունիմ միայն հարցումներ դառնահամ, առայժմ՝ միայն պահս կը սարսափ:

Երկու նայուածքները կը հանդիպէին, իմս՝ սովորական, իրը այնքան էր կայտառ որ պահ մը կը կասկածէի թէ անոր տէրը կոյր ըլլար:

Այդ նայուածքը կը սուզուէր մինչեւ խոր հակումներու, կը հասնէր մինչեւ արեւը խորհուրդներու կը գտնէր այդտեղ ախորժակներ, յետին մտքեր, կը բացայայտէր տեսնանքներս բոլոր՝ խոստովանուած ո՛չ հօր, ո՛չ մօր, ակնթարթի մը մէջ կը հաշուակալէր ան մեղքերս զարմանազան, այնքան մեղադրական որ կարծես գտնուէի դատարան: Ո՛չ որ նայած էր ինձի նման խտրութեամբ, ո՛չ որ քննած էր զիս նման խտրութեամբ, ո՛չ ոստիկան, ո՛չ պաշտօնէայ մաքսատան, ո՛չ որ նայած էր ինձի նման խորերէն, ո՛չ ուսուցիչ, ո՛չ տնօրէն,

ԵՍ ՄԻՇՏ ԱՆ ԱՅՍՏԵՂ ՊԻՏԻ ԸԼԼԱՄ ԸԱՅ ՂԱՏԻ ՊԱՃՊԱՆ ՏՐՈՅ

Հինգ շաբթի, 26 Նոյեմբեր 1998, երեկոյ, Կրան Փայլ: Հազիւ կառաչար մտած՝ կը ձեռնարկէի երեկոյան թերթին ընթերցումին: Ու կանգ կ'առնէի յանկարծ: Կանգ կ'առնէի գլխաւոր լուրին մէջ յիշատակուած անունի մը վրայ: Մայրատուր Այնտէ: Յիշողութիւն, յուզում: Քսան երեք տարի առաջ, 1975ին, «Բարեւ, Հայաստան»ին մէջ ակնարկութիւն ըրած էի անոր վախճանին, պատմած, թէ ճամբարաբար արտայայտելու համար՝ փակցուցած էի անոր լուսանկարը սենեակիս պատին: Ան նախագահն էր Չիլիի, պետական հարուած, պաշտօնը կը բռնադատուէր Փինոչէ անուն գինեւորականի մը կողմէ, որ տասնութ տարի արեւմտեան բռնատէր մը գառնալէ ետք, կ'ընտրուէր ձեռնարկուողական, ներկայիս ան էր որ կը մնար ձեռքաւորուած Լոնտոնի մէջ, թեւեւ ուս մէջ բացուած «Լը Մոնտ»էն կ'իմանայի, թէ, հրճուած, Լորտերու ժողովը մերժած էր ընդունիլ անոր դիւանագիտական անձեռնմխելիութիւնը:

Կը շարունակէի ընթերցումս թրվաւրով, կը կարգայի Լորտերու ժողովի որոշումին մասին վարչապետի մը եւ նախագահի մը կարծիքները: «Անակնկալ մը, ցնծութիւն է՝ գէշ լուր բռնատէրներուն համար: Տպաւորութիւնս այն է որ դէպի միջազգային արդարութիւն ճանապարհը առաջ կ'երթայ քայլ մը եւս. եղածը թէ է անսպասելի, այնքան խորհրդանշական է՝ կ'ըսէր Լիոնէլ ժոսֆին, իսկ ժաք Շիրաք կը գտնէր որ «անընդունելի է որ ոճիները մնան անպատիտ», թէ «պէտք է արդարութիւն ըլլայ եւ Փինոչէի պատասխանատուութիւնները վճուուի արդարօրէն», թէ հարգայի, կը շարունակէի ընթերցումս, շարունակութեան համար պէտք էր անցնէի երկրորդ էջ՝ «Օրը ուր մարդոց արդարութիւնը յաղթանակ տարաւ Պետական տրամադրութեան, raison d'Etat-ին վրայ, «Այսուհետեւ, ո՛չ մէկ բռնատէր ինքզինք ապահով պիտի զգայ որ եւէ տեղ: Հաշուետուութեան ժամը հնչած է», կը կարգայի, կը լի՛չէի թալաթը, կ'իգեկողնէի թեւեւ իրենան, «Կատակն էր Նախագահին հարցը», կ'անցնէի երրորդ էջ, անդին, Չիլիի ներկայ նախագահը Ֆրէյ կը պահանջէր իր հայրենակիցներէն պաշտպանել երկրին ժողովրդավարական կայունութիւնը, ասդին, Մատրիտի մէջ կը ցնծար ժողովուրդը, Այնտէի դուստր իզպայէլն էր որ կը յայտարարէր՝ «Հայրս կ'ըսէր, թէ օր մը պէտք է ստեղծուի բարոյական պատիժ դժնէութեան եւ դաւաճանութեան համար: Այդ պատիժը կ'ուշանար, բայց հաւանաբար եկած է, եկած է առանց կաթիլ մը վրիժառուութեան, առանց կաթիլ մը վրէժիւններու: Պէ՛տք էր յանձնել Փինոչէին սպանական իշխանութիւններուն, որպէսզի դատուէր իր մեղքերուն, սպանութիւններուն, կամայական ձեռքարկութիւններուն, ձեռքարկուածներուն անյայտացումներուն համար:

Վերադարձը: Մինչ Մարդկային Իրաւունքներու կազմակերպութիւններ կ'ողջունէին Լորտերու ժողովին որոշումը, Միացեալ Նահանգներու մարաքաղաքը կը մնար լուս: Միշտ ալ կարելի էր արդարացուած գտնել, գտնել միջոցառումի վրէպներ, vice de forme, եւ վերջապէս ապահովել ազատ արձակումը ոճրագործի մը:

Կը շարունակէի ընթերցումս, 11 Սեպտեմբեր 1973ին էր որ պետական հարուածով մը Փինոչէ վերջ կու տար Այնտէի իշխանութեան, ինչնայու համար թշնամիներուն ձեռքը ինչինքն ճանապարհտուութեան նախագահի իր պալատին մէջ անձնասպան կ'ըլլար Այնտէ, այդ տարիէն սկսեալ մինչեւ վերջերս կը մենիշխէր Փինոչէ, Չիլիի վերջին 25 տարիներու պատմութեան տասնութն կ'անցնէր անոր բռնատիրութեան տակ, կը վերադառնայի թերթիս երկրորդ էջին, կը սահմակէի երբ կը կարգայի թէ մեղադրութեալ «հանցարար է, խղճմտանքը հանգիստ», թերթս ունէր ուրիշ էջեր ալ, «Լորտերը բացին նոր էջ մը միջազգային արդարութեան արտառութեան մէջ», կը կարգայի, հայու արդո՞յթ, հարցը պիտի հասցնէի մեր Դատին, միջազգային մեր ալ, այլապէս ի՞նչ գործ ունէր Չիլիի Այնտէն «Բարեւ, Հայաստան»ին մէջ, մէկ կողմէ Մայիս 29ին, Յեղապահութիւնը կ'ընդունուէր Ֆրանսական Խորհրդարանին մէջ, միւս կողմէ՝ անտրոշութիւնը երբ կ'երթար վաւերացում գտնելու Ծերակոյտին կողմէ, հիմա ալ ժիւլ Վինս-թէյնի հարց մը, կը կարգայի, «Կարեւոր հանգրուան մը, սակայն հանգրուան մը պարզապէս», միայն թէ արդարացուածութիւնը պատմութեան մէջ, կը կարգայի՝ «Առանց մտախնայութեան, պատի մնայ Այնտէի դէմքին վրայ այդ արիւնը այնքան ատեն որ արդարութիւնը չհասնի անարդարութեան մակարդակին ու չհակակռէ գայն:

Բռնատէրեր մ'են գոյնի, հիմա, քսաներեք կամ երկու հարիւր քսաներեք տարի ետք, նոր Այնտէի մը երեւումին առթիւ՝ պիտի կարենամ անկարկութիւն ընել Փինոչէին պատիժ պահանջող սա էջին, շրջանակները մի՛շտ ալ կը փակուին, ես մի՛շտ ալ յայտնող պիտի գտնուիմ, կը լիջնմ որ Այնտէի կողքին, այդ օրերուն, սենեակիս սպանութիւն կային նաեւ նկարները ուրիշներու, նկարները Այնտէին եւ Օչակային, Շէքսպիրին ու Մարտիանին, Սեխովին եւ Պէշիկիշիւնային: Կար մանաւանդ Արարատը՝ քանդակուած պղինձի մէջ եւ ամբողջուած փայտի վրայ, խաչուած պիտի ըսէի, իսկ բոլորուն վերեւը, բարձր տեղ մը, կար Հայէզի «Baise»:

Ու ապշեցուցիչ բան, Փինոչէն ունէր համակիրներ, ժողովուրդին մէկ կարեւոր մասը կը պահանջէր անոր Չիլի

ԽԱՅԾ ԱՆԴԻՄԱԴՐԵԼԻ

Տո՛ւն է գիրքը, բնակարան, փակուած մնալ տան մէջ կարելի չէ սակայն, պետք է դուրս գալ, շրջագայիլ, պետք է բացել, ընդարձակուիլ:

Պանդոկ, տրոփուն վայրի արժանավայել անուն:

Լրագիրք՝ ճշմարիտ, գիրքը՝ ճշմարտանման, փախուստ ճշմարտանմանէն, պանդոկ մըն չէ՞ օրաթերթը, որ կ'ընդունի իր յանախորդները, տեղ կու տայ անոնց, կու տայ տեղ մէկ օրուան, մէկ շաբթուան մէկ ամսուան համար, կը տրամադրէ իր սենեակները, այդ սենեակներու այլազանութեան մէջ աշխարհահայեաց պատշգամներ, բակի վրայ հայող պատուհաններ, այդ այլազանութեան մէջ սալոններ, արքայական յարկաբաժին, անսեթեթ խցիկներ:

Ու այդ պանդոկի յանախորդներուն մէջ՝ մնայուններ, պարբերականներ, այդ յանախորդներուն մէջ՝ անցորդներ, պատահականներ, անոնց մէջ՝ անուանիներ, անանուններ:

Այդ բազմաթիւ պանդոկին ամէնօրեայ պատկերը ամէն օր բովանդակութիւն կը փոխէ, անոր սենեակներու մէջ ամէն օր տարբեր անձեր կը գիշերեն, անոնք կ'ունենան տարբեր կեցութիւններ, պանդոկը սակայն կը շարունակէ պահպանել զինք յատկանշող աստղերուն մակարդակը:


Ու թերթը երբեմն ինձի կը ներկայանայ տարբեր պատկերով:

Անոր իւրաքանչիւր սիւնակը վճարագիր մըն է, պարտամորիակ մը, որուն վրայ արձանագրուած գումարը, սոգական գործողութեամբ իր արժէքը կը փոխանցէ թուղթին:

Ստորագրութիւն մըն ալ՝ այդ թուղթը կը ստանայ գրուածին արժէքը, «դրամատուն»ը պարտաւոր է յարգել զայն, յարգել՝ մէկ պայմանով: Որ այդ «գումար»ը գրողն ու ստորագրողը ունենայ դրամատան մօտ համարժէք վարկը:

Կը նկատեմ որ այստեղ կը հանդիպիմ առաջին եւ երկրորդ մտածումները, կը գուրդողիմ:

ԱՇԽԱՐՀԱՎԱՅԵԱՅ ՊԱՏՈՒՀԱՆ



Այդ «վարկ»ն է որ պիտի ըլլայ այդ սենեակի բնակութեան «վարձ»ը:

Ու վա՛յ անոր որ չունի այդ «վարձ»ը վճարելու «վարկ»ը:

Գիրքին եւ լրագրին միջեւ գաղտնի ճամբաներ, մէկը կը սնանի միւսով, անդու ետհուշ, արդէն ժամանակ մը ի վեր կը մտածեմ սա վերադարձի մասին, կը մտածեմ այդ գումարին, ստորագրութեան եւ վարկին մասին, ուղեղս կը խճողուի խոհերով, երեկոյեան լայնածաւալ լրագրի առջեւ կը կանգնուիմ այն հի՛մ մտածուել թէ անհրաժեշտ չէ ամէն օր այդ

Շարք՝ էջ 10

Մանկապատանեկան

ԱՆԱՍՈՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ԹՈՉՈՒՆՆԵՐԸ ԱԿԱՆՉ ՈՒՆԻՔ

Արդեօք կրնա՞յ ըլլալ, որ այս երգիչները խուլ են: Մենք չենք տեսներ անոնց գլխուն վրայ գտնուող ականջները, որովհետև անոնք «պահուցած են» գլխուն երկու կողմի փետուրներուն մէջ:



ԻՆՉՈ՞Ւ ՉԵՆՔ ԿՐՆԱՐ ՏԵՍԵԼ ՈՐԴԵՐՈՒՆ ԱՉՔԵՐԸ

Որովհետև անոնք աչք չունին: Ուրեմն անոնք ի՞նչպէս կը յառաջանան: Անոնց մորթը կը ծառայէ թէ՛ իբրև աչք, թէ՛ իբրև ականջ: Ան շատ զգայուն է լույսին հանդէպ, ինչպէս նաև լաւապէս կը զգայ գետնի թրթռացումները:

ԻՆՉՈ՞Ւ ՄԵՂՈՒՆԵՐԸ ԿԸ ԽԱՅԹԵՆ


Որովհետև անոնք անօթի են: Ամէն անգամ, երբ մեղու մը քեզ կը խայթէ, ան առիթէն կ'օգտուի քեզմէ շատ չնչին քանակով արիւն առնելու համար: Սակայն այս արիւնի կաթիլը իրեն համար արդէն «խրախճանք» է...

ՈՐԴԸ ԶԱՅՆ ԿԸ ՀԱՆՔ՞


Ո՛չ: Ոչ մէկ ձայն կ'ելլէ որդերուն բերանէն, որովհետև անոնք ո՛չ ձայնալարեր ունին, ոչ ալ լորձուկ: Սակայն ասիկա չի նշանակեր, թէ մենք պէտք է գանոնք ցաւցնենք:

ԻՆՉՈ՞Ւ ԿԸ ԽՌԿԱՆՔ

Երբ կը քնանանք, մեր կողորդին մկանները կը թուլան եւ բնականէն աւելի մեծ տեղ կը գրաւեն: Օղջը, որ միշտ կողորդէն կ'անցնի դէպի թոքերը երթալու համար, շրջելու նուազ տեղ կ'ունենայ այս ձեւով:



Երբեմն օղջ այնքան տեղի պակաս կ'ունենայ, որ դժուար կ'անցնի եւ ճամբուն վրայ կը թրթռացնէ կողորդին մէկ մասը: Այս թրթռացումը կանոնաւոր ձայն մը կը յառաջացնէ, որ խոկոցն է: Մենք աւելի կը խոկանք, երբ յոգնած ենք կամ հարբուխ, կամ՝ երբ մեր կռնակին վրայ կը քնանանք:



Նախաձեռնութիւն

ՊԱՏԱՆԻ ՈՍԿԵՐԻՉՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Երեկոյեան Յատուկ Դասընթացքներ
ՄԵՍՐՈՊԵԱՆ
Արուեստից Վարժարանին մէջ


- * Ոսկերչական ձեւաորում
- * Մոմի կաղապարաշինութիւն
- * Աղամանդաշարութիւն
- * Անգլերէն լեզու
- * Համակարգչային գիտութիւն-computer

Գործակցաբար
Լիբանանի Վարպետ Ոսկերիչներու
եւ Գոհարագործներու Մեծտիքային
01/260504
Մեսրոպեան. Միշտ մէկ քայլ առջեւ

www.aztagdaily.com

ԱՅԼԱԶԱՆ

ԱՌԱՆՅ ՅԱՒԻ ԱՍԵՂ




Ճափոնական ընկերութիւն մը հնարած է սանդ մը, որ ցաւ չի պատճառեր: Այդ սանդը այնքան բարակ է, որ մենք անոր խայթոցը չենք զգար, երբ ան մորթին մէջ կը մտնէ: Այս սանդը ձեռքնուտու է յատկապէս շաքարախտէ տառապող հիւանդներուն համար, որոնք ստիպուած են օրական բազմաթիւ անգամ սանդ գործածել:

ԳԵՂԱՆԿԱՐ ՄԸ՝ ՀՐԱՏԻ ԲՆԱԿԻՉՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ



Անգլիացի արուեստագէտ մը իր գեղանկարներէն մէկը Հրատ մոլորակ պիտի դրկէ յառաջիկայ տարի: Ան այս նկարը գծած է այս առիթով եւ զայն պիտի դնէ անըրպետանաւու մը մէջ, որ պիտի երթայ գիտական փորձեր կատարելու Հրատին վրայ:

ՏԱՐԵՂԱՐՁԻ ԿԱՐԿԱՆԳԱԿԸ...



Իրենց քաղաքին 449րդ տարեդարձը տօնելու համար Պրագիլի Սան Փաուլո քաղաքին բնակիչները շինած են 449 մեթր երկարութեամբ կարկանդակ մը:

ՊԱՆԱՆԸ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՏԱՊ

Պանանը կրնայ անհետանալ մեր պտուղի կողովներէն, տասը տարի ետք...

Պանանի ծառերը զոհ կ'երթան բնութեան երկու ահաւոր հիւանդութիւններու: Բուսաբանները կը մտածեն պանանի աւելի դիմացկուն, նոր պատաստուածով ծառի մը կարելիութեան մասին:

ԽՈՐՀՐԳԱՒՈՐ ԴԵՊՔ ՄԸ՝ ՄՈՍԿՈՒՄՅԻ ՄԷՉ


Ռուսիոյ մայրաքաղաք Մոսկուայի ոստիկանութիւնը տարօրինակ անակնկալի մը առջեւ գտնուած է, երբ խուզարկութիւն կը կատարէր չոր պտուղներու մթերանոցի մը մէջ, ուր 300 քիլո կաշին «չորիացած» էր: Վերջապէս ոստիկանութիւնը յաջողած է

ԻՆՉՈ՞Ւ ՄԵՆՔ ԿՆՃԻՌՆԵՐ ՈՒՆԻՔ

Մորթին մէջ գոյուցիւն ունին առաձգական նեարդներ: Անոնց շնորհիւ մենք կրնանք ժպտալ կամ ծամածռութիւններ ընել, եւ մեր մորթը չի ճաթախի ու թուլանալ:

Երբ մենք երիտասարդ ենք, այս նեարդները պրկուած են: Այս պատճառով է, որ մենք սահուն մորթ մը ունինք:

Երբ ծերանանք, մորթին նեարդները կը մաշին եւ անոնք նուազ առաձգական կը դառնան: Եթէ



դուն լաւ նայա առաձգական թելի մը մաշած ծայրին, պիտի տեսնես ծալքեր: Նոյն երեւոյթը

կը պատահի մորթին պարագային: Այս ծալքերը կ'ընդհանրեն են:

յայտնաբերել յանցաւորները, որոնք... դրացի հանրային պարտէզին սկիւռներն էին:

ԱՒԵԼԻ ՄԵՇ ԹԻՒՈՎ ՀԵՇԻԿՆԵՐ, ՆՈՒԱՉ ՏՈՒՐՔԵՐ




Նորվեգիոյ կառավարութիւնը կը սերտէ, թէ ի՞նչպէս կարելի է հեծիկի գործածութիւնը ընդհանրացնել: Եթէ ձեռք գտնուի, հեծիկով գործի գացող մարդիկը նուազ տուրք պիտի վճարեն: Նորվեգիա նոյնիսկ կը մտածէ ճամբու օրէնքները փոփոխութիւններու ենթարկել՝ հեծիկներուն յարմարեցնելու համար:

ՊՏՈՒՂԻ ՀԻՒԹ

Վերջերս Փարիզի մէջ 600 հոգի միասնաբար պատրաստած են աշխարհի ամէնէն մեծ բանակութեամբ թարմ պտուղի հիւթ: Անոնք ձեռքով քամած են 36 հազար նարինջ, 8400 կրիֆոն եւ 5600 կիտրոն: Ստացուած 3280 լիթր հիւթը բաժնուած է կարիքաւորներու:

ԱՅ


Ափրիկէի Մալուի երկրին մէջ լողորդ մը շնորհիւ իր հմտութեան կրցած է մահէ փրկուիլ:



Երբ կողորդիլու մը անոր վրայ յարձակած է, ան կրցած է սողունը խրտեղընել ու փախցնել... անոր քիթը խածնելով:


ԱՆՀԱՒԱՏԱԼԻ ԲԱՅՑ ԻՐԱՒ

Պրագիլի Ռիօ տը Ժանէյրօ քաղաքին մէջ երկու զբօսաշրջիկներ ինկած են




չէնքի մը ծրոյ յարկէն (35 մեթր բարձրութիւն) եւ միայն թեթեւօրէն վիրաւորուած են... Այս բախտաւորները ինկած են սրճարանի մը կտաւէ հաստ ծածկին վրայ:


Ժ Ա Մ Ա Ն Յ



Ո՞ր ճամբէն պետք է անցնի անկարգելաւոր վայրէջք կատարելու համար եւ ան քանի՞ կետ պիտի հաւաքէ:



Նետերուն վրայի նշաններուն շնորհիւ գտիր, թէ իւրաքանչիւր խաղցող քանի՞ կետ պիտի ունենայ եւ ո՞վ պիտի ըլլայ յաղթականը:



Ներկէ՛ հետեւելով նշաններուն:

Պատրաստե՛ք ՇՈՂԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

www.lemagan.com

ՕՐԱՏԵՏՐ

ՓՄԱՍՏՈՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԵՒ ԱՐԺԵՔԱՌՈՐ ԱՌԱՐԿԱՆԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ

«Լը Հանկար տը Եր-նի»-ի ցուցարարի ամեն ամիս կը կազմակերպէ որոշ թեմայի մը առնչուող լայնածաւալ ցուցահանդէսներ: Վերջինը, որ տեղի կ'ունենայ մինչեւ Մարտի ամսուր, յատկացուած է հին եւ թանկարժէք իրերու ցուցարարութեան:



Ցուցահանդէսը անկիւն մը

Փայտէ դահլիճներ, հին կշիռքներ եւ նոյնիսկ՝ հին յուսանկարներ...

Ցուցահանդէսը նաեւ կը ներկայացնէ իրապէս հայու ազգիւտ քանի մը իրեր, ինչպէս՝ Լիբանանէ հասած «Սինկլըր» կարի մեքենայի առաջին օրինակներէն հատ մը, 19րդ դարու յուսանկարչական գործըք մը: Յիսուսական թուականներու շարժապատկերի սրահներուն մէջ օգտագործուած 16 մմ. ֆիլմի մեքենայ մը եւ այլ իրեր, որոնցմէ իւրա-

քանչիւրը «եկած է» տարբեր ժամանակաշրջանէ եւ «կը պատմէ» տարբեր պատմութիւններ...

Այս ցուցահանդէսը կարելի է այցելել առաւօտեան ժամը 9:30էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00:

ՕՂԵՐԵՒՈՅ



ՀԱՐԱՄ, 29 ՄԱՐՏ 2003

ՊԵՅՐՈՒԹ ՄԱՍԱՄԲ ԱՄՊՈՏ

ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆ ԶԵՐԵԿ՝ 17°C

ԳԻՇԵՐ՝ 10°C

ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 69%

ԳՐԱԴՈՒԱԾ ՕՐ

ՇԱՄԱՉԱՅԻՆԻ «ՔՆԱՐ» ԵՒ «ԳԱՅԻԱՆԷ» ՊԱՐԱՆՈՒՄԲ ԿԱԼԱ 24 ՄԱՅԻՍ 2003

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»-ի մէջ ազգային կամ առօրինակ մասնուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ), եւ՝ հաստատուած՝ ներկայացնել «Ազգակ»-ի ծանուցումներու գրասենեակը:

ՍԱԿԱՐԱՆ

Պէլրուօի սակարանին մէջ օտար դրամացիներու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ. Սուրիական թղթուկի 32,35 - 32,45 լ.ն. Իրաքեան տինար 4855,00 - 4865,00 լ.ն. Քուեյթեան տինար 4965,00 - 4990,00 լ.ն. Յորդանանեան տինար 2100,00 - 2110,00 լ.ն. Պահրէյնեան տինար 3975,00 - 4000,00 լ.ն. Ա.Մ.Էմիրութեան տինար 410,00 - 412,00 լ.ն. Քաթարեան տինար 413,00 - 415,00 լ.ն. Սէուտական տինար 401,50 - 403,50 լ.ն. Օմանեան տինար 3875,00 - 3900,00 լ.ն. Եգիպտական կինէ 249,00 - 259,00 լ.ն. Անգլիական սթերլին 2361,00 - 2371,00 լ.ն. Չուիցերիական ֆրանք 1098,00 - 1103,00 լ.ն. Թրքական իրաք 88,75 - 89,00 լ.ն. Կիպրական փաունտ 2765,00 - 2790,00 լ.ն. Ճափոնական հայար եէն 12,45 - 12,55 լ.ն. Արիւիլեան հայար 2,80 - 2,85 լ.ն. Ամերիկեան տոլար 1501,00 - 1515,00 լ.ն. Քանադական տոլար 1025,00 - 1030,00 լ.ն. Աւստրալիական տոլար 901,00 - 906,00 լ.ն. Եւրօ 1623,00 - 1633,00 լ.ն.

● ՈՍԿԻ Անգլիական մէկ ոսկի 129,000 - 134,000 լ.ն. Իրանեան մէկ ոսկի 115,000 - 120,000 լ.ն. Օսմանեան մէկ ոսկի 107,000 - 112,000 լ.ն. Մեքսիքական փետոս 615,000 - 635,000 լ.ն. Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի 16,000,000 - 16,200,000 լ.ն. Մէկ օսն ոսկի 331,00 - 331,50 \$ Մէկ օսն արծաթ 4,40 - 4,42 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը. Եւրօ 1.0763 - 1.0768 Բանաւական տոլար 1.4664 - 1.4674 Զուիցերիական ֆրանք 1.3714 - 1.3724 Ճափոնական եէն 120.05 - 120.09 Մէկ սթերլին 1.5681 - 1.5691 Մէկ դոլար 556 դրամ

● ՍՈՒԽԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԵՐԸ ԳԻՆԻ Ա. ճշդում ԳԻՆԻ Բ. ճշդում Ա. կարգ 4 3/8 4 4/8 Բ. կարգ 5 5

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱՆԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ (ՀԵՀՈՍ)
ՀԱՅ ԵՎ ԵՎՐՈՅՏՈՅ ՀԱՄԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ
ՀԱՆԴԻՊՈՒՄ-ԶՐՈՅՅ
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԵՏ
* Վեհափառ հայրապետը պիտի խօսի «Երիտասարդութիւնը նոր մարտահրաւերներու դիմաց» միջոցով: Ապա վեհափառ հայրապետը պիտի պատասխանէ ներկաներու հարցումներուն:
* Տեղի կ'ունենայ Կիրակի, 30 Մարտ 2003, առաւօտեան ժամը 11:30ին, վեհարանի դահլիճին մէջ:
* Կը հրաւիրենք մեր համալսարանական ուսանողները եւ մեր երիտասարդ - երիտասարդուհիները՝ ներկայ գտնուելու սոյն հաւաքին եւ լսելու վեհափառ հայրապետին պատգամը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԺԱՆՕ ՕԶԱՆՆԷՍԵԱՆԻ մահուան քառասունըքն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 30 Մարտ 2003, ԱԳՔԻԽԱՍԻ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԲԻԻԶԱՆԴ ՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ մահուան քառասունըքն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 30 Մարտ 2003, ԱԳՔԻԽԱՍԻ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀԱՅՎՈՒՆԻ ՆԱԶԱԿԵԱՆԻ (Ծնեալ՝ ԳՈՋԱՆԵԱՆ) մահուան քառասունըքն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 30 Մարտ 2003, ԺԼՆԻԵՒ Ս. Յարութիւն եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՊԵՏՐՈՍ ՊԱՆՊՈՒՉԱԶԵԱՆԻ մահուան քառասունըքն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 30 Մարտ 2003, Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր-Ս.Եղիա եկեղեցոյ մէջ, Տրպպան հրապարակ, առաւօտեան ժամը 11:00ին:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՒՆՃԵԱՆԻ մահուան քառասունըքն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 30 Մարտ 2003, ԱԳՔԻԽԱՍԻ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՎԵՐԺԻՆ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ (Ծնեալ՝ ՉՈԳՎԱՐԵԱՆ) (մահացած Մոնրէալ) մահուան քառասունըքն առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 30 Մարտ 2003, Ս. Նշան Մայր եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 5402 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

| | | | | | | | | | | |
|----|---|---|---|---|---|---|---|---|----|----|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1 | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | |
| 4 | | | | | | | | | | |
| 5 | | | | | | | | | | |
| 6 | | | | | | | | | | |
| 7 | | | | | | | | | | |
| 8 | | | | | | | | | | |
| 9 | | | | | | | | | | |
| 10 | | | | | | | | | | |
| 11 | | | | | | | | | | |

| ԸՈՐԻՉՈՆԱԿԱՆ | ՈՒՂԱՆԱՅԵՍ |
|---|---|
| 1. Վերնակշիռի: | 1. Բաֆֆիի երկերէն - Ասպար: |
| 2. Շահանդուխտի երկերէն՝ «... Կամուրջներ» - Կրտսեան: | 2. Ուրիշ տեղ - Յոյժ, չափազանց: |
| 3. Կրկնուած բաղաձայններ - Դրկից տառեր - Դարիճների: | 3. Կրկնուած բաղաձայններ - Առաքել - Իշխանական աթոռ: |
| 4. Տունկ - Փուշ: | 4. Հոռոմեական դիցաբանութեան մէջ մահուան աստուածը - Քօշ: |
| 5. Ճարպ - Մեծ մայր: | 5. Ասեղի ծակ - Վտարանդի: |
| 6. Աստուածային: | 6. Կամաց կամաց: |
| 7. Կաբալազգի փոքրիկ թռչուն: | 7. Վճռական կռիւ: |
| 8. Աղբիւր - Մթուօթիւն - Այրուբենէն: | 8. Բնական վայրեր - Արական անուն (հակ.): |
| 9. Խոչակերտներ - Արջառ (հակ.): | 9. Անաւարտ - Վէրք: |
| 10. Սովկէն Յարութիւնեանի գրչանունը - Ջետ: | 10. Սաւուրի հայրը - Կուռար: |
| 11. Որոշուած գին - Այրուբենէն: | 11. Համաձայն - Սամուէլ մարգարէի մայրը: |

ԹԻՒ 5401
ԽԱՉԲԱՌԻՆ
ԼՈՒԹՈՒՄԸ

| | | | | | | | | | | |
|----|---|---|---|---|---|---|---|---|----|----|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 1 | Մ | Ս | Ք | Ս | Մ | Ս | Ս | Ս | Ս | Ս |
| 2 | Ա | Ր | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս |
| 3 | Ն | Ե | Տ | Ք | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս |
| 4 | Օ | Ր | Ի | Ն | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս |
| 5 | Ք | Ի | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս |
| 6 | Կ | Յ | Ի | Ե | Ր | Ի | Ս | Ս | Ս | Ս |
| 7 | Ք | Ա | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս |
| 8 | Ն | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս |
| 9 | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս |
| 10 | Ք | Ր | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս |
| 11 | Ք | Ե | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս | Ս |

ՏԻՆՆԻ ԿՐՆԵՆ ԱՍՏՂԵՐԸ

★ **ԽՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ)**
Սքանչելի վիճակի մէջ կը գտնուիք: Ամէն մարդ պիտի հիանայ ձեր մտքով, որովհետեւ պիտի ունենաք տպաւորիչ աշխատանք եւ յարգալիք վերաբերում:

★ **ՅՈՒՆ (21 Ապրիլէն 21 Մայիս)**
Ձեր մտտիկ բարեկամները պիտի շրջապատեն ձեզ այսօր եւ պիտի գգան, թէ դուք ապահոված էք անոնց աշխատանքին օգտակար ըլլալու բոլոր կարելիութիւնները:

★ **ՅՐԿՈՒՈՐԵԱՆ (22 Մայիսէն 21 Յունիս)**
Այսօրուան ձեր նախանշանները բոլոր աշխատանքները յաջողութեամբ պիտի պատկուին: Օրուան ընթացքին պիտի ունենաք օգտաշատ ու շահաւետ հանդիպումներ:

★ **ՅՆՅԳՆԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)**
Եթէ սիրային ճամբորդութեան մը պիտի ձեռնարկէք առաջին անգամ ըլլալով, ձեր սիրտը թեթեւ թող ըլլայ: Այս ձեռով ձեր կապը աւելի պիտի ջերմանայ:

★ **ԱՌԻԻՄ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)**
Ստիկ ըրէք ձեզի մօտիկ անձերուն խրատները, որոնք կը վերաբերին ձեր ծրագիրներուն: Օրը նկատաւոր է կարգ մը հարցեր դասաւորելու, նուազ յոգնութեամբ:

★ **ԿՈՅՄ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)**
Ձեր ամուսնական կամ սիրային կեանքը քիչ մը տափակ ձեռով կ'ընթացայ, ինչ որ անհանդի կը թուի ձեզի: Օրուան ընթացքին սիրալիք եղբայր ձեր գործակիցներուն հետ:

★ **ԿԵՆԻՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)**
Ձեր կազմակերպած հանդիպումները շատ յաջող պիտի անցնին: Ամէն կողմէ պիտի ստանաք գովաստաններ: Շարունակեցէք աշխատիլ ճոյն թափով եւ եղբայր միշտ սիրալիք:

★ **ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)**
Եթէ ամուսնի եք եւ ձեր սիրտը մեկուս չէք կապած, այսօր պիտի հանդիպէք այն անձին, որուն զիմաց ձեր սիրտը շատ զօրաւոր պիտի բարախէ. համաձայնեցէք ամուսնանալու: Իսկ եթէ ամուսնացած էք, պիտի ունենաք զուարթ հանդիպումներ:

★ **ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)**
Եթէ ձեր գաւակները պատանակեցաք տարիքի մէջ եւ ջանացէք լաւ հասկնալ անոնց փափաքները: Նոր սերունդին հետ պետք է քայլ պահել ըստ օրուան պահանջին:

★ **ԱՅԾԵՂԶԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)**
Հանգստանալու միակ միջոցը այսօր տունէն դուրս գալն է: Հանգստացէք, որուն այնքան արժանի էք: Միօրինակութեան դուրս պետք է գաք: Շատ գոհ պիտի մնաք:

★ **ՄՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարէն 19 Փետրուար)**
Ձեր պիտուէին հաշիւը պիտի կատարէք այսօր եւ պիտի տեսնէք, թէ ձեր տնտեսական վիճակը յուսահատական չէ: Ուրեմն ատով մի մտահոգուիք:

★ **ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)**
Անձի մը մասին ենթադրութիւններ կ'ընէիք, թէ ան ձեզի նկատմամբ սխալ կարծիք ունի: Այսօր պիտի հաստատուի, թէ այս անձը ձեզ շատ կը յարգէ: Ուրեմն բարեկամացէք անոր հետ:

ԱՅՍՈՐ

- Ցուցահանդէս՝ «Լա պիտիվերսիթե. Երբ Երբ փութ արժեքներ», Շուֆի Թրանսպարենտ Մշակութային կենտրոնի մէջ, մինչեւ 19 Ապրիլ:

- Լուսանկարչական ցուցահանդէս՝ Փօլ Զոյլպի «Էօն քայլու տան գ'իւն կոտաս», մինչեւ 29 Մարտ, «Եսպաս Էս. Տէ.» ցուցարահին մէջ:

- Երաժշտական եւ պարային թատրոն՝ Մանուր Բահպանիի «Մյուք ալ թաուաէֆ», ժամը 20:30ին, «Քազիմօ տիւ Լիպան»-ի մէջ:

- Նկարչական ցուցահանդէս՝ «Մա Եսպիւր մորթ», Թաշա Գուլպարի Խոնա, «Ռոշէն» ցուցարահին մէջ, մինչեւ 3 Ապրիլ:

- Թատրոն՝ «Նօ Էրգիթ», ժամը 20:30ին «Ալ Մա-տիմա» թատերարահին մէջ, մինչեւ 29 Մարտ:

ԱԶԳԱԿ 50 ՏՄԱՐԻ ԱՌԱՅՁ 29 Մարտ 1953

ԼԻԲԱՆԱՆ ՈՒՐԱԿ Է ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԶԱԿՈՒՄՈՎ ԱՐԵՒՍՈՒՏԵՐ ԻՆՉՈՒՄ ԳՐԱՐԱՆԵՐ, ԹԵ ՄԵԶԻ ՇԵՏ ԳՈՐԾԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ՊԵՏԵ ԶԵ ՂՆԵ ԱՐԱԲԵԻՍՐԱՅԵԼԵԱՆ ՀԱՇՈՒԹԻՒՆ «ԺՈՂՈՎՈՒՐԸ ՀԱՅ ԵՒ ԱՃԽԱՍԱՆԸ ԿՈՒՐԷ»

Եգիպտոսի մէջ հռչակուած հանրապետութիւնը խոշոր վերածափումներով ծանուցուած լիբանանեան մամուլին մէջ եւ քանի մը մեկնաբանութիւններու արժանացաւ:

ԱՆ ԱՄԱԼ կը յայտնէ, թէ Լիբանան ուրախ է, որովհետեւ միշտ կողմնակից եղած է դեմոկրատիկ եւ հանրապետական վարչակարգին: Ցաւալիք է, որ Լիբանանը չէ կարողանալու ստանալ սակայն թէ երկրի մը բարգաւաճումը անպայմանօրէն հետեւանք չէ քաղաքական որոշ վարչաձեւը: Մարդկային տարրը, ղեկավարներու որակն է, որ ազգի մը թոյլ կու տան արդիւնաւորապէս կազմակերպուիլ եւ յառաջիմութեան ճամբուն մէջ մտնել:

ԱՅՈՒՆ ԵՒ ՈՂ...



Նոյն կարծիք ունի նաեւ ՍԱՍԱ - ԼՈՒՊՆԱՆ, որ կ'ըսէ, թէ հիմնական վարչաձեւը չէ ինքնին. գոյութիւն ունի ժողովրդավար միակցութիւններ, ինչպէս՝ բունտիական հանրապետութիւններ: Եգիպտոսի դեպքերուն ընթացքին մէջ ուշադրութեան արժանի չէ, որ նոր կարգի մը որոշումները իրենց հիմնական բարեկարգումը մը կատարելու միջոցով մարտը վերաբերելով, այլ նաեւ մահաւանդ հաստատութիւններու եւ ազգային կանոնները:

«Անշուշտ կը գրէ ՍԱՍԱ ԼՈՒՊՆԱՆ, չի բաւեր սահմանադրութիւն մը ճիշտագոյն կերպով ղեկավարութեան վարչաձեւ մը հաստատել ժողովրդիկ թոյլ տալու համար, որ ժողովրդավարութիւնը իրականօրէն կիրարկէ: Բայց եւ այնպէս, այս վարչաձեւին հաստատումը պիտի օգնէ ժողովուրդին մօտ ժողովրդական ըմբռնումի գարգացման եւ իրաւունքներու եւ պարտաւորութիւններու սահմանումինը»:

ԳՎԱՆ ՈՒ ՈՂԻՆ

Իր խմբագրականին մէջ, ՊԵՅՐՈՒԹ-ՄԱՍԱՆ ԱՍԱՆ, որ կ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ԹՐԻՓՈԼԻՒ ՄԵԶ

ԱՅՍՕՐ՝ ՌԻԱՏԱ ՈՒԱԼ ԱՏԱՊ - Հ.Մ.Ը.Մ.

Լիբանանի ֆուտբոլի Բ. դասակարգի ախոյեանությունում 21րդ հանգրուանի բացման մրցումներում, երեկ տեղի ունեցան երկու ճակատումներ, որոնցում մեկը տեղի ունեցավ Իսլահ Պըրո Շիմալիի դաշտին վրայ, իսկ մյուսը՝ Թրիփոլիի Քաղաքապետարանի դաշտին վրայ: 3րդ դիրքին վրայ գտնուող Իսլահ արձանագրեց եղանակի իր 10րդ յաղթանակը, 3 - 1 արդիւնքով պարտություն մատնելով Շապաթ Թրիփոլիին: Երկրորդ մրցումին հոթիմասի 4 - 0 արդիւնքով պարտության մատնեց Ահլի Սայտան:

Երեկուան իր արձանագրած այս յաղթանակին ետք, Իսլահ ունեցավ 37 կետ:

Այսօրուան յայտագիրին վրայ է մեկ

մրցում միայն, որուն ընթացքին Թրիփոլիի Քաղաքապետարանի դաշտին վրայ Ռիատա Ուալ Ստապ կը հիւրընկալէ ընդհանուր դասաւորման պարագուծի դիրքը գրաւող Հ.Մ.Ը.Մ.ը, որ ցարդ անպարտելի միակ խումբն է: Մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 3:00ին:

Իր երեք հաւասարություններէն մեկը Ստորեւ՝ 21րդ հանգրուանի շաբաթավերջի մրցումներուն մնացեալ յայտագիրը:

Հ.Մ.Ը.Մ. արձանագրած է Ռիատայի դէմ, Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ (1 - 1): Հետեւ Իսլահը Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները ոչ մէկ ճիգ պետք է խնայեն Ռիատա Ուալ Ստապէն երեք կետ խլելու համար: Նշենք, թէ Հ.Մ.Ը.Մ. այժմ ունի 45 կետ, մինչ 8րդ դիրքին վրայ գտնուող Ռիատա՝ 20 կետ:

| ԱՅՍՕՐ | ԺԱՄ | ԴԱՇՏ |
|---|--------|---------|
| Ռիատա Ուալ Ստապ-Հ.Մ.Ը.Մ. 3:00ին Թրիփոլի | | |
| ՎԱՂԸ | | |
| Ռասինկ - Հ.Մ.Մ. | 4:00ին | Տունիէ |
| Թատ. Նապաթիէ - Հըրրիէ | 4:00ին | Նապաթիէ |
| Մահապպա - Նահտա | 4:00ին | Թրիփոլի |

● ԼԻԲԱՆԱՆԻ ֆուտբոլի Գ. դասակարգի ախոյեանությունում Գ. հանգրուանի մրցումներուն, վաղը՝ Կիրակի, Ալեյի դաշտին վրայ կեսօրուան ժամը 12:30ին, Հ.Մ.Ը.Մ. Պուրճ Համուտ կը ճակատի Ռիատի Ժիէի դէմ:

ՊԱՍՔԵԹՊՈԼ. ԱՂԶԿԱՆՅԲ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ. - ԱՆԴՐԱՆԻԿ՝ 59 - 51

Լիբանանի պասքեթբոլի աղջկանց Բ. դասակարգի «Ճայնըլ Յոր»-ի իր կատարած առաջին մրցումին, երեկ, Հ.Մ.Ը.Մ. Պէյրութ յաջողեցավ 59 - 51 արդիւնքով պարտության մատնել իր մրցակիցը՝ Անդրանիկ Սին Էլ Յիլը, հակառակ պետք որ Ա. կիսախաղին Հ.Մ.Ը.Մ.ի աղջիկները 29 - 21 արդիւնքով ետ կը մնային:

Երկու կազմերուն միջև երկրորդ ճակատումը տեղի պիտի ունենայ դարձալ Սաժէ ժրտէյտի դաշտին վրայ, Երկուշաբթի, 31 Մարտ, ժամը 8:00ին:

ՀԱՅԱՍՏԱՆ - ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԼԱՆՏԱ՝ 2 - 0

Հայաստանի ֆուտբոլի 21 տարեկանէն վար ազգային խումբը երեկ Արմենիաի «Կոնայթ» մարզադաշտին վրայ 2 - 0 արդիւնքով պարտության մատնեց իր հիւրը՝ Հիւսիսային Իրլանտան, իւրաքանչիւր կիսախաղի ընթացքին նշանակելով կոլ մը: 25րդ վայրկեանին Արսէն Միլոյեան բացաւ մրցումին հաշիւը, իսկ 72րդ վայրկեանին Վահէ Դաւիթեան արդիւնքը բարձրացուց երկուքի: Ըստ «Արմէնփրէս» լրատու գործակալու-



Մրցումէն տեսարան մը

թեան, մրցումին երկու կողմերն ալ շատ գեղեցիկ էին: Մարզիչ Անդրանիկ Աղամեանի տղաքը յաջողեցան լաւ մրցում մը կատարել, բացի յետսապահ գիծին կատարած քննի մը սխալներէն, որոնցմէ սակայն բարեբախտաբար չկրցաւ օգտուիլ մրցակից կազմը:

ԵՒՐՕ-2004Ի ՉՏՈՒՄԻ ԲԱԶՄԱԹԻ ՄՐՅՈՒՄՆԵՐ՝ ՇԱԲԱԹԱՎԵՐՋԻՆ

Եւրո-2004ի փուլի մրցումներուն, այսօր Եւրոպայի դաշտերուն վրայ տեղի պիտի ունենան 18 ճակատումներ, որոնցմէ ամենէն պայաջուները վստահաբար պիտի ըլլայ Է. խմբակէն ներս, երբ Վատուպի մէջ Լիխթենշտայն պիտի հիւրընկալէ Անգլիան: Թէեւ այս մրցումէն շատ ակտիվ կարենոր մրցումներ կան, սակայն այս մէկը պիտի ըլլայ ուշագրաւ, որովհետեւ Միացեալ Սահանգներու հետ միասին Իրաքի վրայ պիտուրական յարձակումի ձեռնարկած Անգլիա մտահոգ կը թուի ըլլալ, թէ արդեօք այսօրուան մրցումին ընթացքին կամ անկէ առաջ եւ վերջ արդեօք ի՞նչ կրնայ պատահիլ իր մարզիկներուն, թէեւ Եու. Է. Է. Բ. Ա. մտահեցուցած է, որ ապահովութեան խիստ միջոցառումներ առնուած են, ապահովելու համար անոնց կեանքերը:

Յարդ իր կատարած երկու մրցումներէն մէկ յաղթանակ է մէկ հաւասարութիւն արձանագրած Անգլիա, այժմ պարագուծի դիրքը գրաւող Թուրքիոյ ետին կը գրաւէ 2րդ դիրքը (4 կետով): Թուրքիա, որ շաբաթավերջին մրցում չունի կատարելիք, այժմ ունի 9 կետ:

Անգլիոյ համար այսօր յաղթանակը կը նկատուի կարեւոր, որովհետեւ յառաջիկայ Չորեքշաբթի, 2 Ապրիլին անոր մրցակիցը պիտի ըլլայ Թուրքիա: Հետեւաբար երկու յաղթանակ արձանագրելու պարագային Անգլիա ինք պիտի գրաւէ խմբակին պարագուծի դիրքը:

33 հազար բնակչութիւն միայն ունեցող Լիխթենշտայն այդքան ալ անուանի մարզիկներ չունի: Կ'ակնկալուի, որ անգլիացի երկու հազար համակիրներ ներկայ ըլլան այս մրցումին: Անոր դաշտը կրնայ հիւրընկալել 3500 համակիր:

Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբը, որ մաս կը կազմէ Զ. խմբակին, Երեւանի Հանրապետական մարզադաշտին վրայ այսօր ժամը 16:00ին (Պէյրութի ժամով) պիտի հիւրընկալէ Հիւսիսային Իրլանտան: Անոնք երկուքն ալ ունին մէկական կետ եւ ցարդ կրած են մէկական պարտութիւն եւ արձանագրած մէկական հաւասարութիւն: Հայաստան կը գրաւէ չորրորդ դիրքը, իսկ Հիւսիսային Իրլանտա՝ վերջին դիրքը: Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբին նոր մարզիչ ռումանացի Միհայ Սթոյլո, որ իր առաջին մրցումը պիտի կատարէ, ամբողջ կարելին պիտի ընէ իր կազմին հետ արձանագրելու մրցաշարքին առաջին յաղթանակը, ինչպէս նաեւ իր առաջին յաղթանակը: Նշենք, թէ Հայաստան իր կատարած առաջին մրցումին 2-2 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեց Ուքրանիոյ հետ, իսկ երկրորդին 2-0 արդիւնքով պարտուեցաւ Յունաստանէն:

Ստորեւ՝ այսօր տեղի ունենալիք կարգ մը կարեւորագոյն մրցումներուն նկարագրականները:

Ա. խմբակին պարագուծի դիրքը գրաւող եւ տիտղոսակիր Ֆրանսա, որ իր կատարած երեք մրցումներէն ապահով է անուանագոյն ինք կէտերը, Լանսի մէջ պիտի հիւրընկալէ Մալթան, որ իր կատարած չորս մրցումներուն բոլորին ալ պարտութիւն կրած է:

Ֆրանսայի մարզիչ Ժաք Սանթինի որոշումով խումբին խմբապետը պիտի ըլլայ Ջինետին Չիտան: Հակառակ անոր որ խումբէն պիտի բացակայի Ռոպերտ Փիլէս (վիրաւոր), սակայն անոր խմբակիցներ՝ Պիլլիքսէ Լիսարապու, Ճիպրիլ Սիսէ կը վերադառնան: Տաիտ Թրեպիլէի եւ Ֆապիէն Պարթեպի մասնակցութիւնը կը մնայ կասկածելի:

Գ. խմբակէն ներս տեղի ունենալիք մրցումները բաւական հետաքրքրական են, նկատի ունենալով որ Հոլանտա, Չեխիա եւ Աւստրիա իրենց կատարած երկուշաբթական մրցումներէն յաջողած են հաւաքել ճական կետ:

Հոլանտա, որ այսօր Ռոթերտամի մէջ պիտի հիւրընկալէ Չեխիան, յաղթանակ մը արձանագրելու պարագային պիտի առանձնանայ պարագուծի դիրքին վրայ, որովհետեւ Աւստրիա այսօր մրցում չունի կատարելիք:

Ե. խմբակէն Գերմանիա, որ Նիւրնպերկի մէջ պիտի հիւրընկալէ Լիթւանիան, ունի բացակայ մարզիկներ: Մարզիչ Ռուտի Վեյլըրի կազմէն պիտի բացակային՝ Միքայիլ Պալաք, Քրիսթոֆ Մեթպետրը եւ Ենս Ժերմին (բոլորն ալ վիրաւոր):

Պարագուծի դիրքը գրաւող Գերմանիա ունի վեց կետ, մինչ անոր ետին գտնուող Սլովակիա, որ կ'ապրոյի մը պիտի հիւրընկալէ Իսլանտան, ունի չորս կետ: Անկիստ արձանագրած է մէկ յաղթանակ եւ մէկ հաւասարութիւն:

Հետաքրքրական պիտի ըլլայ Քիբեի մէջ տեղի ունենալիք մրցումը, ուր 2րդ դիրքը գրաւող Ուքրանիա պիտի հիւրընկալէ Սպանիան, որ ցարդ իր կատարած երկու մրցումներէն ապահոված է վեց կետ: Պարտութեան մը պարագային Սպանիա պիտի նահանջէ 2րդ դիրքը:

Թ. խմբակին պարագուծի դիրքը գրաւող Կալէս, որ այժմ ունի 9 կետ, իր չորրորդ յաղ-

թանակը արձանագրելոյ պարագային կարենոր քայլ մը պիտի առնէ դէպի աւարտականի մրցումները: Անկիստ Բարտիֆի մէջ պիտի հիւրընկալէ խմբակին վերջին դիրքը գրաւող Ալբանիան, որ իր կատարած երեք մրցումներուն բոլորին ալ պարտութիւն կրած է:

3րդ դիրքին վրայ գտնուող Իտալիա, որ արձանագրած է մէկ յաղթանակ, մէկ հաւասարութիւն եւ կրած մէկ պարտութիւն, Փալերմոյի մէջ պիտի հիւրընկալէ Ֆինլանտան:

Պարտութիւն մը կրելու պարագային Իտալիա կրնայ նեղ կացութեան մատնուիլ եւ դժուարացնել իր յոյսերը՝ Փորթուգալի տոմս մը ապահովելու համար, որովհետեւ անոր նման չորս կետ ունեցող, սակայն մրցում մը նուազ կատարած Սերպիա - Մոնթենեկրո իր ամէն կարելին կ'ընէ առնուապէս փլէյօֆի մրցումներուն տոմս մը ապահովելու:

Մարզիչ Ճիովանի Թրափաթունիի կազմը բացակայ մարզիկ չունի, սակայն Ֆինլանտայէն կրնայ բացակայիլ Եարի Լիթմանը (վիրաւոր): Սերպիա - Մոնթենեկրո թէ՛ այսօր եւ թէ յառաջիկայ Չորեքշաբթի օր մրցում չունի կատարելիք: Անկիստ ցարդ արձանագրած է մէկ յաղթանակ եւ մէկ հաւասարութիւն:

Ժ. խմբակին չորրորդ դիրքը գրաւող Ալիը, որ իր կատարած երկու մրցումներուն ալ պարտութիւն կրած է, Թիֆլիսի մէջ հիւրը պիտի ըլլայ Վրաստանի: Վստահաբար, որ Ալիը ոչ մէկ ճիգ պիտի խնայէ արձանագրելու համար մրցաշարքի իր առաջին յաղթանակը:

Ստորեւ՝ այսօր տեղի ունենալիք 18 մրցումներուն ամբողջական յայտագիրը, ուր ժամերը կրած են կարգ մը փոփոխութիւններ (նշենք, թէ ժամերը պետք է նկատի ունենալ Պէյրութի ժամով):

| | ԺԱՄ | ԴԱՇՏ |
|-------------------------|---------|-----------|
| Ա. ԽՄԲԱԿ | | |
| Կիպրոս - Իսրայել | 19:00ին | Լիմասոլ |
| Ֆրանսա - Մալթա | 21:45ին | Լանս |
| Բ. ԽՄԲԱԿ | | |
| Պոնտիա - Լուքսամպուրկ | 21:45ին | Սարաեւո |
| Ռումանիա - Դանիա | 18:00ին | Պուրթէշ |
| Գ. ԽՄԲԱԿ | | |
| Պիլիզուսիա - Մոլտաւիա | 18:30ին | Մինսք |
| Հոլանտա - Չեխիա | 21:30ին | Ռոթերտամ |
| Դ. ԽՄԲԱԿ | | |
| Լեհաստան - Հունգարիա | 21:00ին | Չորպով |
| Ե. ԽՄԲԱԿ | | |
| Գերմանիա - Լիթւանիա | 20:00ին | Նիւրնպերկ |
| Սլովակիա - Իսլանտա | 17:00ին | Կլաւքո |
| Զ. ԽՄԲԱԿ | | |
| ՀԱՅԱՍՏԱՆ - Հիւ. Իրլանտա | 16:00ին | Երեւան |
| Ուքրանիա - Սպանիա | 21:00ին | Քիեւ |
| Է. ԽՄԲԱԿ | | |
| Լիխթենշտայն - Անգլիա | 19:30ին | Վատուպ |
| Մակեդոնիա - Սլովակիա | 20:00ին | Սքոփիէ |
| Ը. ԽՄԲԱԿ | | |
| Խրուաթիա - Պելճիքա | 19:30ին | Չադրէպ |
| Թ. ԽՄԲԱԿ | | |
| Իտալիա - Ֆինլանտա | 21:45ին | Փալերմո |
| Կալէս - Ալբանիա | 17:30ին | Բարտիֆ |
| Ժ. ԽՄԲԱԿ | | |
| Վրաստան - Ալիը | 18:00ին | Թիֆլիս |
| Ալբանիա - Ռումանիա | 19:00ին | Թիրանա |

ՀՍԿՈՒՄԻ ՇԱԲԱԹ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԵԶ

Ս. Գրիգոր Լուսաւորչի Մուսնի վ Վերապ տունին եւ Անթիլիասի Մարգարէի Ուխտի Օրուան առիթով, ՀՍԿՈՒՄԻ աւանդական արարողութիւնները տեղի պիտի ունենան 31 Մարտէն Ապրիլ 4:

Հսկումի ժամերը սկսել են, միաբան Հայրեր Հոգեւոր խորհրդածութիւններ պիտի կատարեն Աստուծաշունչ Մատեանէն, ներկայացնելով գայն իրբեւ Հաւատքի ու քրիստոնէական կեանքի աղբիւր: Խորհրդածութիւնները պիտի ներկայացուին Հետեւեալ կարգով:

- **Երկուշաբթի, 31 Մարտ**
ՀՈԳԵ. ԳԵՂԱՐԴ ԱԲՂ. ԶԻՄԵՊԵՆԱՆ
Օրեցօր գիրքեր
- **Երեքշաբթի, 1 Ապրիլ**
ՀՈԳԵ. ՊԱՐՈՅԵՒ ՎՐԴ. ԿԻԼԻԻՍԵԱՆ
Հոգեւոր բանաստեղծութիւններ
- **Չորեքշաբթի, 2 Ապրիլ**
ՀՈԳԵ. ՍԱՇՏՈՑ ՎՐԴ. ԶՕՊԱՆԵԱՆ
Մարգարտութիւններ
- **Հինգշաբթի, 3 Ապրիլ**
ՀՈԳԵ. ՍԱՎՈՐ ԱԲՂ. ԱՇԿԱՐԵԱՆ
Աւետարաններ
- **Ուրբաթ, 4 Ապրիլ**
ՀՈԳԵ. ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ԶԻՅՈՅՏԵԱՆ
Առաքելական նամակներ

Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի զաւակներուն՝ ներկայ ըլլալու եկեղեցական հոգեպարար արարողութեանց եւ լսելու միաբան հայրերու մատուցած ժողովրդային բացատրականները Աստուծաշունչի զանազան բաժանմունքներուն մասին:

ԳԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ԼԵՎԱՍ

ՄԻՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՅԱՅՏԱԳԻՐ

Հ.Մ.Ը.Մ.ի ԼԵՎԱՍԻ մինի - ֆուտբոլի մրցումները, որոնք տեղի կ'ունենան Լեւոնի եւ Սոֆիա Յակոբեան քոլէճի դաշտին վրայ, շաբաթավերջին պիտի կատարուին հետեւեալ յայտագիրին հիմամբ:

| ՇԱԲԱԹ, 29 ՄԱՐՏ |
|---|
| Միջակ.- Լ. եւ Ս. Յակոբեան - Մեւրոպեան 2:15 |
| Փոքր.- Յառաջ - Մեւրոպեան 2:45 |
| Փոքր.- Եղիշէ Մանուկեան - Ս. Խանամիրեան 3:30 |
| Միջակ.- Եղիշէ Մանուկեան - Ճեմարան 4:00 |
| Փոքր.- Ս. Քառասնից Մանկանց - Ճեմարան 4:30 |
| Միջակ.- Ս. Ազնէս - Թոշնոց Բոյն 5:00 |

| ԿԻՐԱՎԻ, 30 ՄԱՐՏ |
|--|
| Միջակ.- Լ. եւ Ս. Յակոբեան - Մեւրոպեան յաղթականը ընդդէմ Եղիշէ Մանուկեան - Ճեմարան յաղթականին 4:00 |
| Միջակ.- Թոշնոց Բոյն - Ս. Ազնէս յաղթականը - ընդդէմ Կ. Բ. Վ. յաղթականին 4:30 |

ԱՅԿԵՐ ՊԻՏԻ ԼՔԷ ՊԱՇՏՕՆԸ



Եու. Է. Է. Բ. Ա. ինչպիսիւն որ տնօրէն Կերիարտ Ալկուր երէկ պաշտօնապէս յայտարարեց, թէ այս տարուան աւարտին վերջնականապէս պիտի լքէ իր պաշտօնը, առողջապահական պատճառներով, ինչպէս նաեւ իր ընտանիքին յաւելեալ ժամեր տրամադրելու համար: 60 տարեկան գերմանացի յայտնեց, թէ 33 տարիները բաւարար են եւ մտադրած է յառաջիկայ տարուան սկստանքէն հեռու մնալ այդ պաշտօնէն: Նշենք, թէ ան առաջին անգամ Եու. Է. Է. Բ. Ա. ին միացաւ 1969ին:

ՎԵՐՋԻՆ ԺԱՍ

ԹՈՒՐԷ ՄԸ ԱՌԵՒԱՆԳԵՑ ՕԴԱՆԱԻ ՄԸ

«ԱՅՓ» լրատու գործակալությունը այսօր առաւօտեան ժամը 0:25ին հարդորդեց, թէ 200 ճամբորդ փոխադրող օդանավը, որ կ'ուղղուէր Անգարայէն Աթէնք, առեւտրային թռիչք օդահէնի մը կողմէ: Օդանավին մէջ կան թուրք երեք երեսփոխաններ եւ նախկին նախարար մը:

Աւելի ուշ հարդորդուեցաւ, որ օդանավը արդէն էջք կատարած է Աթէնք՝ վառելիքի պակասութեամբ: Ըստ թրքական պատկերասփիւռի կայաններուն՝ օդանավը երբ մուտք գործած է յունական սահման, յունական օդուժի երկու օդանավներ ընկերակցած են անոր, մինչեւ Աթէնք էջքը:

Օդահէնը, որ Պէյրութի ժամով մինչեւ 1:00 տակաւին չէր յանձնուած եւ պատանդ կը պահէր ճամբորդները, կը պահանջէր օդանավը տանիլ Պերլին:

ԱԼՃԵՐԻՈՅ ՄԷՋ ՄՊԱՆԴԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

ԱԼՃԵ, 28 (ԱՅՓ).- Արմատական իսլամական պինեալ ուժեր 12 հոգի սպաննած են Ալճերիոյ մէջ, Հինգշաբթիէն Ուրբաթ լուսցող զինեղուան ընթացքին:

Ապահովութեան ուժերու աղբիւրները հաղորդեցին, որ առաջին յարձակումը տեղի ունեցած է մայրաքաղաք Ալճէն 300 քմ. դէպի արեւմուտք Ռեյլիական շրջանին մէջ, ուր սպաննուած է ութ հոգի: Չորս ուրիշներ սպաննուած են Պլիտա շրջանին մէջ, Ալճէն 50 քմ. դէպի հարաւ: Երկրորդ յարձակումին ինկած են նաեւ չորս վիրաւորներ: Ապահովութեան աղբիւրները մանրամասնութիւններ չփոխանցեցին:

ԴԱՃՆԱԿԻՑ ՈՒՇԵՐԸ ՍԱՍՏԻԿ ԿԸ ՈՍԲԱԿՈՇԵՆ ...

Շարունակուած Ա. ԷջԸ

Մինչ այդ, դէպի Պաղտատ ճամբուն վրայ բախումները կը շարունակուին դաշնակից ուժերուն եւ իրաքեան բանակին միջեւ: Միացեալ Նահանգները կը պարտաւստուին 120 հազար յաւելեալ զինուոր ուղարկել Իրաք՝ միանալու համար ցամաքային ուժերուն, որոնք բաւական լուրջ ընդդիմադրութեան կը հանդիպին: Պատրա, Քարպալա, Նասիրա եւ Նաթաֆ կը շարունակեն ինքնապաշտպանութիւնը՝ տեղի չտալով յարձակող ուժերուն արդիական գէնթերուն դիմաց: Ահա՞ թէ ըստ, որ Նաթաֆի մէջ 26 վիրաւոր եւ զոհ ինկած էր Հինգշաբթի օր: Սահաֆ աւելցուց, որ ֆետայիներու զինեղուածները Պաաս կուսակցութեան զինեղները յաջողած են ետ մղել յարձակում մը Նաթաֆի մօտ:

Սատուած Հիւսէյն խոստացած է լաւապէս վարձատրել ոեւէ իրաքցի, որ դաշնակից ուժերուն պատկանող հրապայ, կամ այլ փոխադրակառք կը գրաւէ:

Միւս կողմէ, հիւսիսի մէջ, քրտական ըմբոստ ուժերը կը յառաջանան Քերքուէի վրայ, ուրկէ իրաքեան բանակի ուժերը հեռացած էին: Ըմբոստ ուժերը գրեթէ 16 քմ. հեռաւորութեան վրայ են հիւսիսի քարիզի աղբիւրը նկատուող Քերքուէին:

Ամերիկեան զինուորական աղբիւրի մը համաձայն, Սատուած Հիւսէյն հրահանգած է քիմիական զէնքեր գործածել դաշնակից ուժերուն դէմ:

ՓԵԹՈՒԷ ՄԻԼ. ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆՈՒՆԵՐ ԵՒ ԲՐԻՏԱՆԻԱ ԿՈՒՂՂՈՒՄԻՆ ԴԵՊՐ ԱՂԵՑ

Ուաշինկթըն եւ Լոնտոն «բաղադրականապէս կորսնցուցած են պատերազմը եւ դէպի աղէտ կ'ուղղուին», յայտնեց միջինարեւելեան հարցերու մասնագէտ եւ յողուածագիր բրիտանացի Փէթրիք Միլ:

Երէկ լոյս տեսած յողուածով մը, Միլ կը գրէր, որ ինչ ալ ըլլայ Պաղտատի ճակատամարտին արդիւնքը, ամերիկացիներն ու բրիտանացիները բարոյապէս պարտուած են: Ան աւելցուց, որ ներխուժումը չուրախացուց ու չխանդավառեց իրաքցիները, որոնք դէմ թաղային կռիւներու կը պատրաստուին դաշնակից ուժերը: Միլ ըսաւ նաեւ, որ Պաղտատի յարձակումին պատրաստուող ուժերուն հրամանատարութիւնը հաւանաբար հարց կու տայ, թէ կարելի պիտի ըլլայ՞ նուազագոյն զոհերով (բրիտանացի եւ ամերիկացի) գրաւել Պաղտատը:

ԽԱՅԾ ԱՆԴԻՄԱԴՐԵԼԻ...

Շարունակուած 5րդ էջԸ

լրագիրը գնել, թէ կը բաւէ նոյն թիւը կարդալ տարիներով՝ պարզապէս ընթերցումին աւելցնելով օրուան մթնոլորտին համարժէք մեկնաբանութիւն, թէ թերթի մը իւրաքանչիւր թիւը ազգի մը ամբողջ պատմութեան ամփոփումն է, առանց մոռնալու որ աշխարհի ստեղծումն է կ'ընդունուի մեծ ինքն, որ կը փոխուի ոչինչ, որ թերթը գրութիւններու շարք մըն է, որուն մէջ կ'այտնուին անցեալի դէպքերն ու ապագային իրադարձութիւնները:

Քեզի հետ կամ առանց քեզի: Կան պտուղներ, որոնք քաղուելէ ետք ալ կը շարունակեն հասունանալ, այդպէս ալ կան գրութիւններ, որոնք կրնան կերպարանափոխուիլ տպագրութեանէն ետք ալ, արդէն ժամանակէ մը ի վեր կը մտածեն սա առաջին գրութեան մասին, անոր տրուելիք բովանդակութեան մասին, նոյնիսկ գտած է խորագիր մըն ալ, այդ խորագիրը պիտի ըլլար état des lieux, չէ՞ որ այդ հետախուզութիւնը կ'ընեն մարդիկ, երբ նոր վայր մը կը ստանձնեն, նոր բնակավայր մը կը վարձեն, չէ՞ որ աշխարհը կրկին պիտի ստանձնէի, սակայն ահա կը նկատեն, որ կատարուածը ո՛չ մէկ աղերս ունի ծրագրութեան հետ, այդ՛, կը նկատեն, սակայն ի՛նչ կարելիութիւն, երբ գիտեն, որ ամբողջ ընկերքը՝ հետագայ կեցութեան ամբողջ տեղողութեան՝ այդ պիտի ըլլայ:

Եթէ փոխարինեն «պաղտուկ» «հիրաւոն»-ով, կը դառնա՞մ առաւել հաւատարիմ:

- Տակաւին քանի մը տող առաջ արձանագրեցիք, թէ ոչինչ կը փոխուի աշխարհին մէջ, կը լսեմ «Օտարա-


ԹԵԼ ԱՒԻՒ - ԼՈՆՏՈՆ ԲՆԱՎԿԵԸ

ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ԲՈՂՈՔԷ ԺԵՔ ՍԹՐՈՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՇԱՍԱՐ

ԵՐՈՒՍԱՂԵՄ, 28 (ԱՅՓ).- Իսրայէլ պաշտօնապէս բողոք ներկայացուց Բրիտանիոյ դեսպանին՝ արտաքին գործոց նախարար ձէք Սթրոյի կատարած մէկ յայտարարութեան համար:

Սթրո Երեքշաբթի օր «Պի. Պի. Սի.» ռատիոկայանէն կատարած հարցազրոյցի մը ընթացքին ըսած էր, թէ Արեւմուտքը յանցաւոր կը նկատուի շատերու կողմէ երկու շափ ու երկու կշիռ որդեգրելու համար, որովհետեւ Արեւմուտքը մէկ կողմէն կ'ուզէ պատժել Իրաքը ՄԱԿի որոշումները անտեսելու համար, սակայն միւս կողմէ ոչինչ կ'ընէ պարտադրելու համար պաղեստինցիներուն եւ Իսրայէլի առնչուող որոշումները: Բրիտանիա Ուրբաթ

օր փորձեց մեղմացնել Իսրայէլի պայքարը, դիտել տալով թէ Լոնտոն չ'ուզէր ըսել, թէ Իրաքի եւ Իսրայէլի պարագաները կը նոյնանան: Կատարարութեան բանբերը աւելցուց, որ Սթրո կ'ուզէր ըսել, թէ Ապահովութեան խորհուրդի բոլոր որոշումները պէտք է գործադրուին իրարմէն:



Սթրո արդէն գլջացած իր յայտարարութեան համար...

Իսրայէլի արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր տնօրէնը՝ Ետով Պիւրան քրիտանացի դեսպանը հանդիպումի մը իրաւիքեց փոխանցելու համար Թէլ Աւիւի բողոքը Սթրոյի «անհիմն» արտայայտութեան դէմ, որ վու-

գահեռներ կը գծէ Իրաքի դէմ արշաւին եւ արաբեւիսրայէլեան տագնապին միջեւ:

Միւս կողմէ, իսրայէլացի բարձրաստիճան պաշտօնատար մը յայտարարեց, որ Իսրայէլի եւ պաղեստինցիներուն միջեւ խաղաղութեան ճամբու քարտէսը պիտի չի իրապարակուի Իրաքի դէմ պատերազմին աւարտին առաջ: Ան աւելցուց, որ քարտէսը իրապարակելէ առաջ Միացեալ Նահանգներ պիտի խորհրդակցին Իսրայէլի հետ:

Հակառակ այս բոլորին՝ իսրայէլեան բանակը պաղեստինեան շրջաններուն մէջ կը շարունակէ ձեռնարկութիւններ կատարել պաղեստինցի արմատականներու դէմ:

Միլ դիտել տուաւ նաեւ, որ պատերազմը խորացում գտն է վիճը Միացեալ Նահանգներուն հաւատարիմ Մոցի պետութիւններուն եւ արաբական ու իսլամական աշխարհի մնացեալ հոսանքին միջեւ: Մտահոգ են նաեւ եգիպտոսն ու Յորդանանը, որոնք բարեկամներ են Ուաշինկթընի, սակայն իրենց ժողովուրդը չի բաժնէր իրենց կեցուածքը:

Միլ ըսաւ, որ Ուաշինկթըն չ'աջողեցաւ արդարացընել պատերազմի որոշումը, որովհետեւ իսկական նպատակն է հակակշիռի տակ առնել քարիւղով հարուստ շրջան մը:

Լոնտոնեան «Թալմաթ» օրաթերթը կը գրէր, որ բրիտանական ու ամերիկեան գաղտնի սպասարկութիւնները չէին նախատեսած, թէ Սատուածի բանակին հակադրութեանը այսքան զօրաւոր պիտի ըլլայ: Օրաթերթը կ'աւելցնէր, որ պատերազմի առաջին քանի մը ժամերուն բրիտանացի զինուորականները մտած էին, թէ Պաասը շուտով պիտի իյնայ եւ թէ հարաւի շիի ընկալութիւնը պիտի ըմբոստանան Սատուածի դէմ: Դաշնակիցները յամառ ընդդիմութիւնը չէին նախատեսած իրենց հաշիւներուն մէջ:

Վերեւ նշուած տեսակէտը եւ անոր նման արտայայտութիւնները հերքելու համար, ամերիկացի ու բրիտանացի զինուորականներ ու պաշտօնատարներ երէկ կարծէք կը մրցէին իրարու հետ՝ ըսելու համար, որ իրենք կ'անկախ ընդդիմութիւնը եւ նախատեսած են, որ պատերազմը երկար պիտի տեւէ: Անոնք մինչեւ իսկ հերքեցին, որ խօսած են կարճ պատերազմի մը մասին:

ԹՈՒՐԻՒԱ ՄԵՃ ՄԵԱԼ ՄԸ ԳՈՐԾԵՑ

Կ'ԸՍԵ ՎՈԼՅՈՎԻՑ

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան փոխ նախարար Փոլ Վոլֆովից ըսաւ, որ Թուրքիա մեծ սխալ մը գործեց երբ ամերիկեան ուժերուն արգիլեց օդաւորութիւնը թրքական հողերը՝ Իրաքի դէմ հիւսիսային ճակատը բանալու համար: Վոլֆովից ըսաւ, որ կասկած չ'է վեր է այն իրողութիւնը, թէ պատերազմը աւելի շուտ պիտի աւարտէր, եթէ հիւսիսի մէջ ալ ամերիկեան ցամաքային ուժեր ներկայ ըլլային:

(ԱՅՓ)

ԹՈՒՐԻՒԱ ՄԵՐԾԵՑ ԱԶՍԱ ԱՐԶԱԿՈՒՄԸ ՔԻՒՐՏ ՉՈՐՄ ԵՐԵՍՓՈՒՆԱՆՆԵՐՈՒՆ

ԱՆԳԱՐԱ, 28 (ԱՅՓ).- Թուրքիոյ պետական ապահովութեան մէկ առեւանք Ուրբաթ օր մերժեց ապատ արձակումը քիւրտ նախկին չորս երեսփոխաններուն: Փաստաբաններ պահանջած էին, որ դատավարութեան ընթացքին ապատ արձակուին ամբաստանեալները:

Լէյլա Չանա, Հաթիպ Տիշլէ, Օրհան Տոդան եւ Սելիմ Սատաք բանտարկուած են 1994էն ի վեր: Անոնք դատաւարտուած են 15 տարի բանտարկութեամբ՝ քրտական պինեալ շարժումներու գործունէութեանց մեղաւանցած ըլլալու յանցանքի համար: Վերջերս, անոնք պահանջեցին վերատեսութեան ենթարկել վճիռը՝ օգտուելով Անգարայի յայտարարած բարեկարգումներէն: Ուրբաթ օր (երէկ) սկսաւ անոնց երկրորդ դատավարութիւնը, սակայն դատաւորները չ'արտօնեցին, որ մինչ այդ ապատ արձակուին:

ԸՍՏ ՌՈՒՄ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԸ

ՌՈՒՄԻԱ ՀԵՌԱՏԵՍ ՉԷ

ՄՈՍԿՈՒԱ, 28 (ԱՅՓ).- Մոսկուա դիտումաւոր կերպով աչք կը գոցէ Իրանի կորիպային պէնքերու ծածուկ ծրագիրին հանդէպ, յայտնեց ռուս մասնագէտ մը Ուրբաթ օր:

«Եւ. Էւ. Էյ. - Քանատա» հիմնարկին տնօրէնը՝ Սերկէյ Ռոկով ըսաւ, որ Ռուսիա հեռաւտն չէ: Ռոկով աւելցուց, որ Մոսկուա կը ձեւացնէ թէ տեղեակ չէ Իրանի կորիպային պէնքերու ծրագիրէն, հակառակ անոր որ գիտէ, թէ Թեհրան կորիպային ծրագիրներ կը մշակէ:

Ռուսիա անցեալ շաբաթ հերքած էր, որ կը ծրագրէ ուրանիումի գործարան մը կառուցելու Իրանի մէջ: Նման գործարան մը թափ պիտի տայ ու յառաջիկայ մէջ պիտի դնէ Իրանի կորիպային ուժանիւթի ծրագիրներու գործադրութիւնը:

Ռուս մասնագէտը շեշտեց, որ Մոսկուա որեւէ ձեւով չ'օժանդակէր Իրանի կորիպային պէնքերու ծրագիրին: «Ռուսիա ապօրինի որեւէ գործ չի կատարեր», աւելցուց Ռոկով:

CASIO. The World Of Silence...It's CASIO's Solution! Quality Durability Dependability. Images of CASIO electronic cash registers (TK-T200, TE-2000, TE-100) with descriptive text and distributor information for Lebanon.